



**ՀԱՉԱՐԱՄՅԱԿԻ
ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ
ՀԻՄՆԱԳՐԱՍ-ՀԱՅԱՍՏԱՆ**

Մամյո հաղորդագրություն

16 փետրվարի, 2009

Կնքվեց ոռոգման ենթաձրագրի շինարարության վերահսկողության պայմանագիր

Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ – Հայաստան ՊՈԱԿ-ի և գերմանական Սի-Ի-Էս Քոնսալթինգ Էնջինիրս (CES Consulting Engineers Salzgitter GmbH), գերմանական Էյ-Էյչ-Թի Գրուպ (AHT GROUP AG) և Երևանի ճարտարապետության և Շինարարության Պետական Համալսարանի կոնստրուկտիվ միջև պայմանագիր կնքվեց, համաձայն որի կոնստրուկտիվ Ոռոգվող գյուղատնտեսություն ենթաձրագրի շրջանակներում պետք է իրականացնի ենթակառուցվածքների շինարարության վերահսկողության աշխատանքներ: Պայմանագիրը ստորագրվեց 2009թ-ի փետրվարի 16-ին Երևանի ճարտարապետության և Շինարարության Պետական Համալսարանում ՀՄՀ-Հայաստանի Գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանի և կոնստրուկտիվ աշխատանքային խմբի ղեկավար Վալդեմար Փալմբազի կողմից:

Պայմանագիրը նախատեսում է վեց մայր ջրանցքների, յոթ ինքնահոս համակարգերի վերականգնման, 17 պոմպակայանների նորոգման և վերափոխման, Արարատյան հարթավայրի դրենաժային համակարգի և մի շարք ներտնտեսային ջրանցքների վերականգնման շինարարական աշխատանքների վերահսկողություն: Կոնստրուկտիվը նաև կիրականացնի աշխատանքային սեմինարներ՝ ուղղված միջազգայնորեն ընդունված շինարարական տեխնոլոգիաների, չափորոշիչների, պահանջների կիրառմանն ու որակի վերահսկմանը:

Պայմանագրի արժեքն է 2.9 միլիոն ԱՄՆ դոլար և կգործի ՀՄՀ-Հայաստանի Համաձայնագրի իրականացման ամբողջ ընթացքում:

Այս պայմանագրի և ՀՄՀ-Հայաստան ծրագրի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության համար խնդրում ենք այցելել՝

www.mca.am

###

Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ - Հայաստանը (ՀՄՀ-Հայաստան) պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է ՀՀ կառավարության կողմից և պատասխանատու է Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի ու ՀՀ կառավարության միջև կնքված Համաձայնագրի թափանցիկ իրականացումը վերահսկելու համար: